

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

**ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳԻՒՏԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ Վ. ԱՐԵՒԵԼՅՈՒ  
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Վարդան Արեւելցին իր ստեղծագործութիւններէ մէջ յաճախ է խօսել զրբերի զիւտի մասին եւ նոյնիսկ մի երկուան էլ ամբողջապէս նուիրել է դրան: Դա վկայում է, որ հայ ժողովրդի պատմութեան այդ ամենակենսական հարցերից մէկը նա իր սրտին շատ մօտ է ընդունել եւ շատ անգամ էլ խորհրդածութեան նիւթ է դարձրել: Այս իրողութիւնը մենք նկատում ենք նրա «Հաւաքումն պատմութեան», «Ժղլանքի», «Մեկնութիւն քերականի», զրբերի զիւտին նուիրուած ներբողի եւ շարականի մէջ<sup>1</sup>:

Բանասիրութիւնը վաղուց է ուշադրութեան անել Վարդան Արեւելցու յիշեալ երկերում, առաւելապէս առաջին երկուսի մէջ եղած տեղեկութիւնները: Գիտնականները տարբեր բացատրութիւն ու գնահատական են տուել զրբանց<sup>2</sup>:

«Հաւաքումն պատմութեան» մէջ Վարդան Արեւելցին յիշատակութիւն է անում, թէ իրր Կիլիկիայում Լեւոն Բ թագաւորի ժամանակ «Գտաւ զրամ հայերէն զրով՝ զրոշմեալ զանուն կոսպաշտ թագաւորացն հայկազանց»<sup>3</sup>: Մ. Չամչեանը, Ն. Տաղաւարեանը, Հ. Աճառեանը եւ ուրիշներ իրաւամբ մերժել են յիշեալ զրամի վրայ հայերէն զիր լինելու հնարաւորութիւնը, իսկ Ղ. Ինճիճեանը, Ի. Յարութիւնեանը, Մ. Էմինը գտնում են, որ այդ կարող էր եւ

<sup>1</sup> «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 49, 51, 53, ձեռ. թիւ 750, էջ 115բ-116ա, ձեռ. թիւ 8775, էջ 279ա-300բ, Վարդան Արեւելցի, Մեկնութիւն քերականի, աշխատասիրութեամբ՝ Լ. Էմանուէլեանի, Երևան, 1972, էջ 84-92: Եսրապատմ. . . ի Կոստանդնուպոլիս, 1853, էջ 589:

<sup>2</sup> Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Ա, Վենետիկ, 1784, էջ 755-761, Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհադրական Հայաստանեայց աշխարհի, Գ, Վենետիկ, 1835, էջ 75, Մ. Տաղաւարեան, Մատուցումն հայ տառից, Վիեննա, 1895, էջ 9-10, Ի. Յարութիւնեան, Հայոց զիրբը, Թիֆլիզ, 1892, էջ 251-267, 271, 273, 296-297: Միւսների մասին մանրամասն տե՛ս Հ. Անտոնեան, Հայոց զրբերը, Վիեննա, 1928, էջ 63-64, 67-68, 70, 75, 80-83, 88-98, 110 եւ այլն, Ա. Առաքելեան, Հայ ժողովրդի մտաւոր մշակոյթի զարգացման պատմութիւն, Ա, Երևան, 1959, էջ 170-172, 190-192:

<sup>3</sup> Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, էջ 50:

ճշմարիտ լինել<sup>4</sup>։ Մեր կարծիքով, բանասէրների իրարամերժ դիրքը այս հարցում նշան չէ այն բանի, որ այդ յիշատակութիւնը միանգամայն անիմաստ է։ Եթէ այսօրուայ դրութեամբ այս խնդրի համար սոյն յիշատակութիւնը շահեկանութիւնից զուրկ է, սակայն բացառուած չէ, որ այն հետագայում այլ բացատրութիւն կը ստանայ եւ կ'ունենայ իր թերեւս կարեւոր նշանակութիւնը։ Բացի դրանից, ինքնին հետաքրքիր է այն, որ յիշեալ գրամի վրայ, ըստ վկայւածի, տատերը յունարէն չեն եղել եւ վերաբերել են Հայաստանի նախաքրիստոնէական շրջանին։

Վարդան Արեւելցին թէեւ այն կարծիքին է, որ Հայերը Մերոսոյ Մաշտոցից առջ ունեցել են իրենց սեփական գրերը, բայց նա աւելի որոշակի չ'ը կայում է, որ նրանք զեռ չճշտուած ժամանակներից «սոյն եւ ասորի եւ պարսիկ գրով շատացեալք» էին<sup>5</sup>։ Միեւնոյնը հաստատում է նաեւ Գրիգոր Լուսավորչին նուիրուած իր ներբողի մէջ, որտեղ այս կապակցութեամբ գրել է. «Վարդապետս կարգէր (Գրիգոր Լուսավորիչը — Փ. Ա.), յոյն եւ ասորի գրոց գիտակո կացուցանէր»<sup>6</sup>։ Դժուար չէ նկատել, որ նա հաւանութիւն է տալիս նախօրօք մեր պատմագիրների յատկապէս այն հաղորդումներին, ըստ որոնց Հայերը Մերոսոյ Մաշտոցից առջ «ասորի ուսմամբ» եւ «յունականանալն փութին»<sup>7</sup>։

Ինչպէս յայտնի է, թեր ու զէմ շատ կարծիքներ են եղել վերոյրեալի մասին, բայց, որովհետեւ մեր նպատակն հայերէն գրերի գիտի մասնաւոր ըննութեամբ պարզելը չէ, մենք մտադիր չենք խորանալու այդ եւ յարակից խնդիրների մէջ, միայն մի քանի գիտողութիւն ենք անելու Վարդան Արեւելցու վկայութիւնների պատմագիտական եւ փաստագրական որոշ հանգամանք ներք մասին։

Այսպէս, Վարդան Արեւելցին եւս անդրադարձել է Դանիէլիան գրերին, եւ թէեւ իր ուղղակի խօսքի մէջ զրանք բխեցնում է «ի հին ժամանակաց», սակայն իր «Ժողանք»ում գրերի գիտին վերաբերող հատուածից, անկախ սոյնի այս կապակցութեամբ ունեցած որոշ հակասութիւններից, մեր կարծիքով, աւելի շուտ հետեւում է այն, որ այդ գրերը ուղղակի առնչութիւն ունէին Դանիէլի հետ, ոչ միայն նրա համար, որ իրր թէ «պատահմամբ» գտնուեցին նոս մօտ։ Իր եւ «Հաւաքումն պատմութեան», եւ «Ժողանք»ի մէջ զրանց վերաբերեալ ասուած է, որ մի շարք պակասութիւնների պատճառով զրանք Հայաստանում գործածութեան չեն դրուել, հետեւաբար՝ «Հայերէն գիր» չէին, այլ, ըստ Լեւոյթիին, ինչ որ «յարմարեցուած» տատեր։

Արդեօ՞ք ինքը՝ Դանիէլը չէ զրանց հեղինակը։

Թէեւ Մոպսէս Խորենացին հաստատում է այդ ասելով՝ «յարմարեալ ի Դանիէլի կպիսկոպոսէ»<sup>8</sup>, եւ որոշ բանասէրներ հաւանութիւն են տուել զրան<sup>9</sup>, բայց մենք, յատկապէս նկատի ունենալով Վարդան Արեւելցու «Ժողանք»ում

4 ՏԼՄ 2. Անտոնեան, Հայոց գրերը, էջ 64, 67։  
 5 «Հաւաքումն...», էջ 49։  
 6 Մատենադարան, ձեռ. թիւ 8775, էջ 237բ։  
 7 Լ. Անտոնեան, Հայոց գրերը, էջ 122, 123։  
 8 Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 325։  
 9 Լ. Անտոնեան, Հայոց գրերը, էջ 71-76։

եղած Համապատասխան Հատուածը, ենթադրում ենք, որ այդ, իրօք այդպէս է<sup>10</sup> :

Վարդան Արեւելցու վկայութեամբ, Դանիէլիան գրեթէ 22 Հատ էին : Ինչպէս յայտնի է, տասերի այս թիւը յատուկ է սեմական այբուբեններին : Այստե՞ղ էլ պատահականութիւն : Ձենք կարծում, որովհետեւ, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ, թուական այս փաստը, ըստ երեւոյթին, ստոյգ է : Ուրեմն, սա եւս վկայում է, որ Դանիէլիան գրեթէ ունեցել են սեմական ծագում : Այս դէպքում եւս աւելի պատճառարանուած կը լինի մտածել, թէ, իրապէս, շատ Հուանական է, որ Դանիէլիան գրեթէ Հնարել կամ թերեւս յարմարեցրել է Դանիէլ Ասորին : Ահա թէ ինչու, մեր ենթադրութեամբ, Մովսէս Խորենացու, Ստեփանոս Տարօնեցու (Ասողիկ) եւ Վարդան Արեւելցու («Ժղլանք»ի մէջ եղած Հատուածում) Հազարդամները, իրենց Հակասութիւններով Հանդերձ, աւելի Հակումած են Հուաստելու վերոյիշեալը :

<sup>10</sup> Մենք անհաւանական չենք գտնում, որ Դանիէլ Ասորի եպիսկոպոսը «յարմարեցրել» է գիր «Հայերի համար» : Նա, ըստ մեզ, այդպէս վարուել է, որպէսզի Հայերին «սիրաշահելով»՝ Ասորիների եւ Յոյների մրցութեան ժամանակ օգնած լինի Ասորիներին եւ Հայերին հետո պահի յունական գրի, գրականութեան, մշակութային եւ քաղաքական ազդեցութիւնից : Որ Դանիէլը այդպէս վարուելու շահագրգռուածութիւն կարող էր ունենալ, այդ պարզ եւ հասկանալի է : Յատկապէս Գ դարի վերջերին և Ե դարի սկիզբներին տրոհուած Հայաստանի մէջ ուժեղ պայքար էր ծաւալում յունական եւ ասորական կողմնորոշման խմբակցութիւնների միջեւ, իւրաքանչիւրը, բնական է, ջանալով մեծացնել իր ազդեցութեան կշիռն ու ոլորտը : Թէեւ այն պայքարը հիմնականում կրօնական եւ մշակութային հանգամանք էր կրում, սակայն ազգային-քաղաքական շարժառիւթներն ու նպատակը նուազ էական չէին :

Ինչ խօսք, այս դրութիւնը չէր կարող Ասորիներին չմտահոգել եւ, բնական է, որ նրանք, այդ քուտ եւ Դանիէլ եպիսկոպոսը, պիտի խորհէին իրենց դիրքերը ամրացնելու որեւէ հնարքի մասին, մասնաւոր որ պարսկական կառավարութեան աջակցութիւնն էլ ի նպաստ իրենց էր ակնյայտօրէն : Գիրը յաւագոյնն էր այդ դէպքում : Սեփականը առաջարկել չէին կարող, այն կը խրտնեցնէր Հայերին, ինչպէս եւ եղաւ էլ, ուստի հարկ էր այլ այբուբեն, եւ այդ, ըստ երեւոյթին, եղաւ Դանիէլեանը : Ինչպէս Ղ. Ազաւանն է մատնանշել. «Բնական ու քաղաքական հանգամանքները մտաւորապէս կշռելով» («Մուրն», 1892, էջ 1844) կը տեսնենք, որ այդ հնարաւոր եւ պատճառարանուած իրողութիւնն է : Տուեալ դէպքում, մասնակի առումով, կարող ենք վկայակոչել այն փաստը, որ Մեսրոպ Մաշտոցը երկու այլ ժողովուրդների համար գիր յօրինեց նոյն օրերին... :

Այս հարցում, մեր կարծիքով, կարեւոր հանգամանք է այն, թէ ինչպիսիք են եղել Դանիէլ Ասորու անձնական հնարաւորութիւնները : Ըստ երեւոյթին, նա այն մարդն էր, որը կարող էր նման մի դժուարին եւ պատասխանատու գործի ձեռնարկել : Մովսէս Խորենացու հետեւութեամբ Վարդան Արեւելցին «Ժղլանք»ի մէջ վկայում է, որ Մեսրոպ Մաշտոցը ինքն անձամբ «զոհաց գարձեալ... առ նոյն Դանիէլ եպիսկոպոս եւ սակաւ ինչ աշխատ եղին եւ չկարացի ինչ աւելի շահիլ» (ձեռ. քի 8775, էջ 115բ, հմմտ. Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 326) : Եւ անհաւանական չէ, որ նա եղել է Դանիէլ Ասորու մօտ, քանի որ գրաւոր բոլոր աղբիւրներն էլ վկայում են, որ նա մեկնել

է Ասորիք, Եղեսիա : Այս ստեղծագործական եւ գիտական նպատակը : Միքէ<sup>ո</sup> բնական ու պատմաառարանուած չէ, որ նա այդ նոյն *Ինչպիսի՞ն էին այս գրերը ըստ Վարդան Արեւելցոյ . . .*

- 1. Քիչ եւ թերի էին .
- 2. 22 Հատ էին եւ ունէին սեմական, աւելի ճիշտը՝ ստորական ծագում .
- 3. Ձէին «պարզում» Հայերէնի «բնդարձակութիւն»ը, «զի՛ չրերէր լիով զհարստութիւն լեզուիս (Հայոց — Փ. Ա.)» :
- 4. Մերսոյ Մաշտոցը դրանցով չկարողացաւ «խօսել» Աստուածաշունչը, «զի չկարէին բանել նոքօք» :

Որ այս տառերը թերի են եղել եւ չեն կարողացել արտայայտել Հայերէնի առաւել հարուստ եւ Հայերէնին յատուկ հնչիւնների համակարգը, այդ վկայուած է միտերան մեզ հասած գրատուր աղբիւրներում : Ուստի, մենք այդ փաստի վրայ կանդ չենք առնի, քանի որ մեր նպատակը Գանիէյեան գրերի ընդհանուր քննութիւնը չէ եւ քանի որ Վարդան Արեւելցին այս կէտում աւելացնելիք ոչինչ չունի : Ուշադրութեան արժանին այտեղ, ինչպէս արդէն գիտւած է, նրա այն վկայութիւնն է, ըստ որի Գանիէյեան տառերը 22 հատ են եղել : Բանասէրներից ոմանք՝ Ղ. Ինճիճեան, Մ. Էմին, Հիւրչման, Ղ. Ազա-

նպատակով կարող էր լինել նաեւ Դանիէյի մօտ, ուստի, մեր կարծիքով, նիշտ են Մովսէս Խորենացին եւ Վարդան Արեւելցին, որոնք մասնաւորելով իրենց իօտքը, յայտնում են, որ Մերսոյ Մաշտոցը Եղեսիա «դարձեալ» գնալիս եղել է նաեւ Դանիէյի մօտ : Ուրեմն, Դանիէյ Ասորին, պատահական անձնաւորութիւն չէր ոչ միայն իբրեւ կրօնական աստիճանաւոր, այլեւ որպէս գրի ու դրամութեան մարդ եւ կարող էր ձեռնարկել նման մի գործի : Կարծում ենք, որ Կորիւնը եւս նրան «ագնաւական Դանիէյ» կոչելով, մի աւելորդ մեծարանք չէ որ շոյայել է :

Քանի որ իբրի գրութիւնը այս էր եւ քանի որ նախամերսոյեան շքշանի հայերէն գրերի գոյութիւնը առնուազն տարակուսելի է, ապա ինչո՞ւ են բաղդիւ, ինչպէս արել են բանասէրներից ոմանք (Հ. Աճառեան, Հայոց գրերը, էջ 68-70), թէ իբր այդպիսիք էին Դանիէյեան գրերը, հետեւաբար՝ շատ վաղ ժամանակների եւ ոչ իրենք :

Թողնելով այս առիթով բանասիրութեան մէջ տեղ գտած բազմաթիւ կարծիքները, կ'ուզենայինք միայն մի քանի խօսք ասել մեծանուն գիտնական Հ. Աճառեանի այս կարգադրութեամբ արած մի երկու դիտողութեան մասին, որովհետեւ նա ընդհանուր յայտարարի է բերել հայերէն գրերի գիտի վերաբերեալ մինչ այդ եղած բոլոր տեսակետները : Իր «Հայոց գրերը» խիստ արժեւորար աշխատութեան մէջ այս առիթով նա հետեւեալն է գրում. «Ամենէն գորւոր ապացոյցն է (Դանիէյ Ասորու՝ Դանիէյեան գրերի հեղինակ լինելու դէմ — Փ. Ա.) Կորիւնի վկայութիւնը . . . Յայնժամ պատուէր նոցա արքայն վասն ան ուրումն ասորոյն եպիսկոպոսին *ագնուական Դանիէյ* անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս աղվարեծաց հայերէն լեզուի» (Կոր. էջ 8) : Մեր դժբախտութեամբ այս հատուածը կը կաղայ եւ անպատեառ պակաս բառ մը կայ. «որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս հայերէն լեզուի», ի՞նչ. բայր կը պակսի : Ինձ կը թուի, թէ այս սպակաս բայր պիտի ըլլայ «գտեալ», եւ ասոր համար է, որ իսկոյն յաջորդ տողին մէջ ալ կը կրկնուի . «Եւ իբրեւ պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն (կարդայ՝ գտելոյն) ի Դանիէյէ . . .» : Այս բոլ-

քէն կը հետեւի, թէ 'Գանիէլ յանկարծ տեղ մը գտեր էր այդ նշանագրերը եւ հետեւաբար անոնք իր հնարածները չէին» (Է. Աճառեան, Հայոց գրերը, էջ 66, Բ. Յարութիւնեան, Միւլլիեր, Ն. Տաղաւարեան եւ ուրիշներ<sup>11</sup> համոզուած

72-73) : Մեզ քում է, որ մեծավաստակ գիտնականը շատ նիշտ լրացնելով բընագիրը, արել է ոչ նիշտ հետեւութիւն, կարծելով, թէ «գտեալ» այդ լրացուցից անդամն իրում է այն, որ 'Գանիէլը գրերը «յանկարծ տեղ մը գտեր էր», բայց չէ՛ որ «գտեալ»-ը կարող էր այս դէպքում ունենալ նաեւ «հնարել», «յօրինել», «ստեղծել» իմաստը : Ո՛ւմ յայտնի չէ, որ մեր գրերի ստեղծումը անլի յանախ կոչուել է «գիւտ գրոց» առանց նկատել տալու, որ այն գտնուած է «ինչ որ տեղ մը» : Հենց իր՝ Կորիւնի մօտ էլ այն կիրառուած է վերագրեալ «յօրինել», «հնարել» իմաստով . « . . . եւ ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել» (Կորիւն, «Վարք Մաշտոցի», Երևան, 1941, էջ 42) : Էլ չենք ասում, որ մեր մատենագրութեան ու բանասիրութեան մէջ, «գրի գտնելը» նշանակու հասկացում է «յօրինել» առումով : Այնպէս որ, վերոնշեալ խօսքերից չի կարելի անսպասան հետեւցնել, որ դրանք «ինչ որ տեղ մը» պատրաստի գտնուեցին 'Գանիէլի կողմից, այլեւ կարելի է մտածել, որ այդ խօսքերը 'Գանիէլի կողմից նշուած գրերի յօրինմանն են վերաբերում եւ, մեր կարծիքով, վերջինս անլի հաւանական է :

Մեր ենթադրութեամբ համոզիչ չէ նաեւ այն տեսակէտը, թէ իբր 'Գանիէլեան գրերը «յանկարծ» գտնուեցին, այս բանի սովորական իմաստով : Որովհետեւ, եթէ դրա շուրջ վաղուց խօսուած չլինէր բաւականաչափ շատ եւ այդ մասին չգիտեանային շատերը, նման լուր հեռաւոր Միջագետքից մինչեւ Հայաստան եւ Հայոց քաղաքը արդէն հասած չէր լինի եւ Հայերը այդ չէին իմանայ հենց որ սկսեցին մտածել իրենց սեփական գիրն ունենալու մասին : Յետոյ, եթէ, իբօք, այդ գրերը վաղուց արդէն կային, հայերէն էին եւ դրուել էին գործածութեան, ինչո՞ւ 5-րդ դարի Հայերը, անլի որոշակի՝ Մեսրոպ Մաշտոցը, իր գործակիցներն ու մեր պատմագիրները, այնքան լուստեղեակ պիտի լինէին մեր անցեալի պատմութեանը, բայց պիտի չգիտեանային, որ ունեցել ենք նաեւ շրջանառութեան մէջ մտած մեր սեփական գիրը : Եթէ որոշակի գիտեանային, որ այդպիսի գիր մենք ունեցել ենք, մեր գրաւոր ազգիւրներում, բնական է, որ խօսք լինէր նաեւ այդ գրերը որոնելու մասին : Բայց նման փորձ չի էլ եղել : Միայն յետոյ, երբ յայտնի է լինում, որ հայերէն գրեր կան 'Գանիէլ Ասորու մօտ, խօսք է լինում դրանց մասին, այն էլ, ինչպէս յայտնի է, բաւականաչափ անորոշ ու հակասական : Բացի դրանից, ինչպէ՞ս եղաւ, որ Հայաստանում կորսուեց հայերէն տառերի ամենավերջին հետքն անգամ, իսկ տառերը ամբողջութեամբ յայտնուեցին հեռաւոր Ասորիում : Միթէ՞ այս ամէնը ցոյց է տալիս, որ 'Գանիէլ Ասորու մօտ յիշեալ գրերը իրապէս պատահաբար եւ «յանկարծ» յայտնաբերուեցին : Եթէ, իբօք, դրանք Հայաստանում արդէն կիրառուած հայերէն տառեր լինէին, տրամաբանական չէ, որ բնդամէր երկու տարի եւ, ըստ ոմանց անլի ստույգ հաշումների, (Ս. Քոչանջեան, Մովսէս Խորենացու նորայայտ երկաթագիր պատառիկն ու 'Գանիէլեան նշանագրերի օգտագործման ժամանակի հարցը, «Բանբեր Մատենադարանի», քիւ 4, 1958, էջ 177-182) երկու ամիս էլ չկարողանային մնալ շրջանառութեան մէջ, հիմնովին դուրս մղուէին եւ միայն 'Գանիէլի մօտ մի կտոր մագաղաթի վրայ պահպանուէին :

<sup>11</sup> Է. Աճառեան, Հայոց գրերը, էջ 80-105 :

են, որ Վարդան Արեւելցու թուական այս փաստի հաղորդումը ճշմարտացի է և նոյնիսկ նրանցից ոմանք փորձ էլ են արել ճշտելու, թէ որո՞նք էին այդ տառերը: Այնքանով, որ դրանք, համաձայն գրաւոր աղբիւրների վկայութեան, թերի էին, չէին կապում մեր տառերն իրար, փանկ չէին կազմում, ըստ բանասէրների համատարած ենթադրութեան, չունէին ձայնաւորներ և, ինչպէս քիչ վերը տեսանք, եթէ դրանք Դանիէլ Ասորու «յարմարեցրածն» էին, ապա, կարծում ենք, թէ շատ հաւանական է, որ այդ տառերը լինէին 22 հատ և բխէին սեմական, աւելի շուտ ասորական այբուբենից, և ըստ այսմ էլ «յարմարեալ» լինէին, ինչպէս հաղորդում է ինքը՝ Վարդան Արեւելցին<sup>12</sup>:

3-րդ և 4-րդ կէտերը, որոնք նախորդ մեր պատմիչների հաղորդումների այլաձև շարադրանքն են, պատմում են այդ տառերի մեր լեզուի այս կամ այն օրինաչափութիւնը արտայայտել չկարենալու մասին: Ինքնին դրանք նորոյթ չեն և ըստ էութեան նկատելի փաստ չեն առաջադրում, բայց Դանիէլեան գրերի յատուկ քննութեան դէպքում, կարծում ենք, որ կ'ունենան իրենց բոշակի նշանակութիւնը: Այստեղ կ'ուզենայինք միայն նշել, որ այս երկու կէտերի մէջ ամփոփուած Վարդան Արեւելցու խօսքը նաև այն մասին է, որ Դանիէլեան գրերը իրականում այդ օրերին նորութիւն էին մեր զպրութեան մէջ, բայց թերի, անկատար, մեր լեզուի բոլոր օրինաչափութիւններին ոչ համապատասխան:

Մեր համոզմամբ Վարդան Արեւելցու վկայութիւնների մէջ ամենակարեւորը Մեսրոպ Մաշտոցի գործելակերպի, օտար տառերին գիտելու նրա նպատակի, Հայոց և Ասորիների (այդտեղից էլ՝ նաև միւս ժողովուրդների) գրերի փոխադարձ առնչութիւնների վերաբերեալ «Ժղյանք»ում եղած հատւածն է:

Բանասիրութեան մէջ սոյն հատուածին արուել է ոչ միատեսակ դատութիւն: Բանասէրներից ոմանք հաւանութիւն են տուել այնտեղ հաղորդուած տեղեկութիւններին ու բարձր դնահատել գրանք, իսկ ոմանք էլ՝ բնդահատակը<sup>13</sup>: Ահա այն.

«Եւ ո՞ր են գրերն զոր պարգեւեաց Աստուած:

Պատ(ասխանի): Այս են՝ Չ գիր ձայնաւոր և ԺԳ անձայն: Եւ ձայնաւորքն են այս՝ ա, ե, ո, ի, ը, ւ և անձայնքն են այս՝ բ, գ, ժ, ծ, ձ, չ, ջ, վ, ց, շ, Տ, յ, փ, ընդամէն ժԹ: Եւ այս են ճշմարտապէս ստուղիւ դտեալ, զի Ասորիք բնդ մեր թագաւորօքն էին և նոցայն ԻԲ գիր է, ի նոցանէ քանացան առնել մեզ զիր: Եւ լեալ էր Հայերէն նշանագիր ի հին ժամանակն սակաւ և զի չկարէին բանել նոքօք՝ թողին և մոռացաւ և եփ գարձեալ ի խնդիր եղեն, զրտաւ առ Դանէլ անուն Ասորի եպիսկոպոս, և Սահակ, Մեսրոպ տառեցին զԱ-

<sup>12</sup> Մատենադարան, օճա. քիւ 750, էջ 115բ: Ի դէպ ասեմք, որ մեր կարծիքով «Ժղյանք»ում (ըստ ոմանց՝ Վարդանգիւք) այս բառի մասին եղած հաղորդումը միշտ չի ընկալուած: Այնտեղ չի ասուած, որ Դանիէլեան գրերը 17-ն էին, այլ՝ «զի առաջիմեք ի նոցանէ էր առած ժէ գիր, զի Ե գիրն բողեալ էր և չէր քարգմանեալ, եփ քանային, քէ քարգմանեմք ըստ մեր լեզուիս, չրգայր ի բան այն Ե գիրն»: Ինչպէս տեսնում եմք, խօսքը 22 (17+5) գրերի մասին է, որոնք գտնուում էին Դանիէլի մօտ և որոնցից 17-ը «քարգմանել» էին: Այս վերջինի մասին կը խօսեմք քիչ յետոյ:

<sup>13</sup> Ի. Յարութիւնեան, Հայոց գրերը, էջ 267-271: Հ. Անտեան, Հայոց գրերը, էջ 87-93:

բէլ անուն էրէց Ասորի և երեր: Չի չրերէր լիով գհարստութիւն լեզուիս, զնաց զարձեալ Մեսրոպ առ նոյն Դանէլ եպիսկոպոս և և սակաւ ինչ աշխատ եղեն և և չկարացին ինչ աւելի շահիլ, զի առաջինն ի նոցանէ էր առած ժէ զիր, զի և զիրն թողեալ էր և չէր թարգմանեալ, եփ ջանային թէ՛ թարգմանենք ըստ մեր լեզուիս, չգայր ի բան այն և զիրն: Ապայ յազաւթս ապաւինեալ տեսանէր մարդարէական առօք թաթ ձեռին աջոյ որ զրէր ի վերայ վիմի, և ամենայն հանգամանքն և որպէսութիւնքն տրպաւորեցաւ ի սիրտն և վաղվազակի ըստեղծանէր ժէ զիր. և այն որ է ասեն, վասն նոցա պատուականութեան ասեն, որ ձայնաւորք են և արպէս հոգի են այլոցն: Եւ ընդէ՞ր ասեն և, զի Ձ է ձայնաւորն. զի է զիրն կայր յատորոցն և նայ զայն էառ ի Դանիէլէ Մեսրոպ, վասն որոյ զայն այլ նմայ ասեն, բայց ի մարդոյ օգտեցաւ: Չա, զէ զիրն, և զժժ զիրն յԱստուծոյ, և վասն զրոյն առաւել պիտանութեան զէ մէն ասեն և գտվեն, զժժ շիշեն: Այլ զայս հաստատ տես, և թէ ասեն, թէ ալփայն այլոցտ կայ, է՞ր շառնուին. ասեմք, թէ ասորոցն ա է, որ է՝ ո, և այրն այս է, ա չկայ: Եւ այլք զի ունին, բայց այլ (կ)երպիւ, մերն յԱստուծոյ ձեւացաւ աւրինակն. այս առանց կարծեաց է»<sup>14</sup>:

Այստեղ, ինչպէս նկատեցինք, նա պատմում է, որ Մեսրոպ Մաշտոցը վերստին գալիս է Դանիէլի մօտ և վերջինիս հետ ուսումնասիրում Դանիէլիան գրերը, որոնք, ըստ Վարդան Արեւելցու, ոչ այլ ինչ էին, եթէ ոչ ասորական կամ նրանց նմանութեամբ յարմարեցուած տառեր: Այդ 22 տառերից 17-ը «թարգմանեալ» էին և 5-ը՝ ոչ: Մեսրոպ Մաշտոցն ու Դանիէլ Ասորին աշխատում են միասին և, այնուամենայնիւ, չեն կարողանում «թարգմանել», որովհետեւ «եփ ջանային, թէ թարգմանենք ըստ մեր լեզուիս, չգայր ի բան այն և զիրն»: Արդ, ի՞նչ պէտք է հասկանալ, երբ այստեղ Վարդան Արեւելցին աւում է, «թարգմանել զգիրս»: Գրի թարգմանութիւնը, մեր կարծիքով, կարող է միայն լինել այն, որ թարգմանուող գրի նշանակութիւնն ու արժէքը համապատասխանեցուի, վերածուի մի ուրիշ լեզուում համապատասխան նշանակութեան և արժէքի: Այստեղ, անշուշտ, խօսք լինել չի կարող գրերի փոխառութեան մասին, քանի որ, եթէ այդ լինէր հեղինակի ասել ուզածը, նա կարող էր գիրութեամբ անել այդ աւելի պարզ և ուղղակի խօսքերով, ինչպէս արել են մի քանի այլ հեղինակներ: Որոշակի է, որ նա «թարգմանել» բառը պատահաբար չի օգտագործել: Երկու անգամ այն կիրառուած է և երկու դէպքում էլ միևնույն մտքով: Նոյն հատուածի վերջում, Վարդան Արեւելցին առարկելով «ամանց», որոնք «... ասեն, թէ ալփայն այլոցտ կայ, է՞ր շառնուին», պատասխանում է, որովհետեւ «... ասորոցն ա է, որ է՝ ո, և այրն այս է, ա չըկայ»<sup>15</sup>, այսինքն մեր ա տառին լրիւ համապատասխան հնչոյթ չի խորհրդանշել նրանց «ալփայն» կամ «ալեֆ»-ը<sup>16</sup>:

<sup>14</sup> Մատենադարան, ձեռ. քիւ 750, էջ 115բ: Կարծում եմք «գտաւ առ Դանիէլ անուն ասորի եպիսկոպոսն» լրացումը անպայման հայերէն վերոնշեալ մոտացուած «նշանագրին» կարող է չվերաբերուել, որովհետեւ հետագայ տողերը ևս ցոյց են տալիս, որ խօսքը աւելի շատ ասորիների գրերի եւ Դանիէլի ֆանեքի հետ կապուած գրերի մասին է:

<sup>15</sup> Ձեռ. քիւ 750, էջ 115բ:

<sup>16</sup> Հնչոյթների վերաբերեալ այսօրինակ տարբերակման տեսակէտից ուշագրաւ է Վարդան Արեւելցու «Մեկնութիւն քերականի» աշխատութեան «Յաղագս տառի» հատուածը: Այստեղ կատարուած է որոշակի տեսական բնոյ-

Ա տառի հնչութային արժեքի նկատմամբ ցուցարկումը այս բնույթի վերաբերմունքը եւ բացատրութիւնը միանգամայն ցոյց են տալիս, որ դրի «Թարգմանութեան» մէջ Վարդան Արեւելցին տեսնում է դրի հնչութային արժեքի բացայայտումն ու օգտագործումը: Նշանակում է, որ ըստ Վարդան Արեւելցու վկայութեան, Մեսրոպ Մաշտոցը նկատի էր առնում օտար տառերի հնչութային արժեքը, երբ դիրը «զալիս էր մեր լեզուին», այսինքն, երբ յարմարում էր մեր լեզուի համապատասխան հնչոյթին, նա այն «Թարգմանում» էր եւ ու թէ պարզապէս առնում կամ փոխադրում: Այնպէս որ, երբ Վարդան Արեւելցին «Ժղյանք»ի սոյն հատուածում գրում է, թէ Քի նոցանէ էր առած ժէ զիր, դի ե դիր թողեալ էր եւ չէր թարգմանեալ», խօսում է ոչ թէ դրի սովորական փոխառութեան, այլ մեր լեզուի 17 համապատասխան հնչոյթների դատորոշման, ճշտման մասին:

Ի վերջոյ, Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ գործի առաւել դժուարին բաժինն էլ, այն էր, ինչպէս ժամանակին նշել է Պրօֆ. Գ. Սեւակը, որ նա իր մայրենի լեզուի բարձրագոյն հնչուձայններից տարբերէր թուով շատ աւելի քիչ հնչոյթները<sup>17</sup>: Եւ այս խնդրում, ինչ խօսք, ասորական եւ ոչ միայն ասորական զրեբը կարող էին օգտակար լինել: Այս է պատճառը, որ Մաշտոցը չգոհացաւ միայն ասորական զրեբի ուսումնասիրութեամբ: Զէ՞ որ հայերէնի հնչոյթները աւելի շատ էին ու տարբեր: Նոր որոնումներ էին պէտք, որպէսզի աւելի հանգամանօրէն ուսումնասիրուէր հայերէնի հնչուձայնի համակարգը, վերջնականապէս ճշտուէին նրա բոլոր հնչոյթները եւ միայն յետոյ յօրինուէին եւ ձեւերբերուէին տառապատկերները: Եւ Մեսրոպ Մաշտոցը այդպէս էլ վարուեւ է:

Վարդան Արեւելցին «Ժղյանք»ի յիշեալ հատուածում յայտնում է, որ ՄԷ ըստ Մաշտոցի հայերէն այբուբենի մնացած 19 զրեբը (հնչոյթները) «յլուսուծոյ» ստացաւ, այլ կերպ ստած, նա այդ 19 հայերէն հնչոյթները ճշտեց միւս լեզուների այբուբենների ուսումնասիրութեամբ: Նշանակում է, ըստ Վարդան Արեւելցու, հայերէնի 36 հնչոյթներից 17-ը կային Դանիէլիան եւ ասորական այբուբենի մէջ, իսկ մնացած 19-ը՝ ոչ:

հանրացում, ի դէպ առաջին անգամ այսօրվան գիտականօրէն ընդունելի եւ ամբողջական: Օրինակ. ինչքան քիչու է նկատուած գրերի հնչուձայնի արտաբերման երեւոյթը: Խօսքն ուղղելով «ուսումնասէր» ընթերցողին, նա գրում է. «Արա քնտրութիւն, ո՛վ ուսումնասէր, եւ բաժանեա լեզուաւոյ եւ բերանովոյ, քէ ո՞ր են [գրերը — Փ. Ա.], որ լեզուին ծայրն առնու, եւ կամ գո՞ր՝ մէջն, կամ՝ ո՞ր են, որ տակաւ լեզուին ասին կամ շրքամբն եւ կամ լնդաւն» (էջ 90-91): Մի այլ պարագայի հետեւեալն է նշմարել տալիս. «Եւ կրկնակ մասն [գրերը — Փ. Ա.], զի մի մի իւրաքանչիւր ի սոցանէ յերկուց ձայնակցաց բաղկացեալ է, քանզի բաղկանայ գ-այն ի ս-էէ եւ ի ծ-այէ, եւ խ-էն՝ յերկուց բնականից ք-էից, շ-այն՝ յերկուց ս-էից, եւ ո-այն՝ յերկուց ք-էից» (էջ 92): Իսկ խօսելով երեք «սուղ» գրերի՝ ո, ե, յ մասին, բացատրում է. «Եւ սուղ են երեք՝ ո, ե, յ: Եւ սուղ ասին, զի քան գրուն երկայնսն՝ սակաւ են: Իսկ այս երեքն սուղ վասն այն ասին, զի մարդկայինք են. եւ երկուքն ո-յերն՝ մին ո-յ է, եւ միւսն՝ աւ, զի աւ-ն բերանի բառ է, եւ ո-յն՝ քրի, եւ այսինքն է՝ զի յորժամ ասես քէ վոյ՝ քմաւ ասի» (էջ 86): Եւ այսպէս նաեւ զիր-հնչոյթների մի շարք այլ յատկանիշների մասին, որոնք առաւելաբար կարեւոր նշանակութիւն են ստանում քերականագիտութեան եւ լեզուագիտութեան տեսանկիւնից:

<sup>17</sup> Գ. Սեւակ, Մեսրոպ Մաշտոց... , Երեւան, 1962, էջ 29:

